ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ն ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/70 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Արտաքին օգտագործման դրոշներ՝ յուրաքանչյուրը 2.5 մ երկարությամբ և 1.25 մ լայնությամբ: Դրոշները պետք է պատրաստված լինեն արտաքին օգտագործման համար նախատեսված հողմակայուն և անձրևակայուն դրոշային ցանցային գործվածքից՝ 120 գ/մ² խտությամբ, ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության նկատմամբ կայուն, երկկողմանի վառ գունավոր տպագրությամբ: Տպագրությունը պետք է իրականացվի արտաքին օգտագործման համար նախատեսված, գործվածքի նյութին համապատասխան տեխնոլոգիայով՝ ապահովելով գույների հագեցվածությունը, պատկերի հստակությունը, գունային կայունությունը և տպագրված պատկերի դիմադրությունը տեղումների ու արևային ճառագայթների ազդեցությանը: Տպագրությունը պետք է ապահովի դրոշի երկու կողմերում ամբողջական և ընթեռնելի պատկեր: Դրոշները պետք է ունենան կրկնակի ամրացված եզրային կարեր և ամրացման կարաբիններ: Դրոշները պետք է ապահովված լինեն գիշերային լուսավորությամբ՝ ներքևից դեպի վեր ուղղված լույսի միջոցով: Յուրաքանչյուր դրոշի համար նախատեսվում է առանձին LED տեսակի լուսատու՝ անձրևից և փոշուց IP66 պաշտպանությամբ, 4000 լյումեն (Lm) հզորությամբ: Լուսատուները պետք է տեղադրվեն այնպես, որ ապահովեն դրոշների ամբողջական լուսավորությունը: Լուսատուների ձեռքբերումը, տեղադրումը, միացումը և գործարկումն իրականացվում է մատակարարի կողմից: Դրոշների տեսակները՝ ՀՀ պետական եռագույն դրոշ (1 հատ): Դրոշը պետք է համապատասխանի ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «ՀՀ դրոշի և ՀՀ զինանշանի ընդհանուր տեխնիկական պայմանները սահմանելու մասին» N 888-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված ընդհանուր տեխնիկական պայմաններին: ՀՀ

	Առողջապահության նախարարության (ԱՆ) պաշտոնական լոգոյով սպիտակ դրոշ (1 հատ)։ Լոգոյի չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ։ ՀԾՕԾ պաշտոնական լոգոյով սպիտակ դրոշ (1 հատ)։ Լոգոյի ֆայլը տրամադրվում է պատվիրատուի կողմից։ Լոգոյի չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Դրոշակաձողի նկարագրություն Արտաքին օգտագործման համար նախատեսված դրոշակաձողերի համակարգ՝ 10 մ բարձրությամբ։ Դրոշակաձողը պետք է լինի կոնաձև, պատրաստված փոշեներկված մետաղից։ Դրոշակաձողի ներքևի հատվածի խողովակի տրամագիծը՝ 105 մմ, իսկ վերևի հատվածինը՝ 76 մմ։ Խողովակները պետք է լինեն հաստ պատերով։ Դրոշակաձողը պետք է նախատեսված լինի արտաքին միջավայրում շահագործման համար և հագեցած լինի արտաքին մալուխային մեխանիզմով՝ դրոշի բարձրացման և իջեցման համար։ Ձողի գագաթային մասը պետք է լինի կլոր։ Դրոշակաձողի տեղադրումը բետոնե հիմքով իրականացվում է մատակարարի կողմից։ Բետոնե հիմքը պետք է հաշվարկվի դրոշակաձողի, քամու բեռնվածության և տեղանքի հողային պայմանների հիման վրա։ Դրոշակաձողերի դասավորվածությունը և բետոնե հիմքի ձևը համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Երաշխիքային պայմաններ Մետաղական դրոշակաձողերի, մեխանիզմների և բետոնե հիմքի համար սահմանվում է 24 ամիս երաշխիքային ժամկետ։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ВАНЕСА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕՕ-ԷԱՃԱՊՁԲ-2026/70 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	